



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՔԱՐՈՉԷ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այս շաբաթավերջը Հրաշտակապետաց տօնն է:

Նշենք, որ Կիրակի, 11 Նոյեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը Ներկայացող հոգեւոր իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH

On Saturday, November 10th, the Armenian Church will celebrate the Feast of the Holy Archangels.

On Sunday, November 11th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena and deliver the sermon.

Ս. ՊԱՐԱՐԱԳ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԷՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շէնքին բացումէն ի վեր, անոր յարկին տակ ստեղծուած է գեղեցիկ աւանդութիւն մը: Արդարեւ, Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինութեամբ, ամսական հերթականութեամբ, Շաբաթ երեկոյեան Ս. Պատարագ կը մատուցուի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ, յատկապէս նկատի ունենալով մեր երիտասարդներուն հոգեկան սնունդի պահանջը:

Այս ծիրին մէջ, Շաբաթ, 10 Նոյեմբերի երեկոյեան ժամը 6:30ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Մատրան մէջ: Պիտի պատարագէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան: Պատարագի տեւողութեան, պիտի կիրարկուի դաստիարակչական ծրագիր մը. այսպէս, Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան մէջ ընդ մէջ բացատրութիւն պիտի տայ մատրան կից սրահին մէջ արարողութեան հետեւող երիտասարդներուն, Ս. Պատարագի խորհուրդը աւելի մատչելի դարձնելով անոնց:

DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL

Since the opening of the newly built Prelacy headquarters, Divine Liturgy is celebrated at the St. Dertad and St. Ashkhen Chapel on a monthly basis. On Saturday, November 10th, Divine Liturgy will be celebrated at the Chapel by Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian.

During Liturgy, Very Rev. Fr. Barthev Gulumian will offer explanations regarding the service for the faithful and especially for the youth following the Liturgy from the hall adjacent to the Chapel.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ Կ'ԱՅՑԵԼԷ ԴԱԽԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Համաձայն տարիներու ավանդութեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը վերամուտի առիթով այցելեց Ազգային Վարժարանները: Այս տարի, ընդառաջելով Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան վարչութեան հրաւերին, ան կ'այցելէ նաեւ պետական այն վարժարանները, ուր յիշեալ հաստատութիւնը հայերէնի ու հայ մշակոյթի դասաւանդութիւն կը մատուցէ հայ աշակերտներու: Նշենք, որ Առաջնորդ Սրբազանը տարեվերջին, իբրեւ քաջալերանք յառաջադէմ հայ ուսանողներու, ներկայ կ'ըլլայ նաեւ Հաստատութեան այն հանդիսութեան, ուր գնահատանքի կ'արժանանան պետական վարժարաններէ փայլուն յաջողութեամբ շրջանաւարտ եղող հայ ուսանողները:

Արդ, ընդառաջելով Հաստատութեան հրաւերին, Առաջնորդ Սրբազանը Հինգշաբթի, 8 Նոյեմբերի յետմիջօրէին ձեռնարկեց շարք մը այցելութիւններու եւ իբրեւ առաջին հանգրուան, այցելեց Կլենտէլի Պալպոս նախակրթարանը: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան, ինչպէս նաեւ Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան ներկայացուցիչներ:

Հանդիպումին ներկայ եղան պետական կրթական համակարգի եւ այլ ներկայացուցիչական դէմքեր: Անոնց շարքին էին Կրէկ Գրիգորեան, Նայիրի Նահապետեան եւ Մայքըլ Էսքալանթ եւ վարժարանին տնօրէնուհին՝ Տիկին Լինտա Ռուսօ Միլանօ:

Առաջնորդ Սրբազանը դիմաւորուեցաւ վարժարանի պատասխանատուներուն եւ հայ դաստիարակներուն կողմէ. աշակերտները պատրաստած էին գեղեցիկ յայտագիր մը: Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց հայերէն լեզուով դասաւանդուող ծրագիրներուն հետեւող աշակերտներուն նախանձախնդրութիւնը՝ հաղորդուելու մեր մշակութային ժառանգութեանց հետ, դրուատեց իրենց զաւակները այս ծրագիրին մասնակից դարձնելու ծնողներուն հաւատարմութիւնը, ապա նաեւ՝ Դաւթեան-Մարիամեան Կրթ. հաստատութեան նուիրեալ ծառայողները, որոնք ի գին մեծ զոհողութիւններու, յառաջ կը տանի հայակերտումի այս իրայատուկ աշխատանքը:

Այցելութիւնները պիտի շարունակուին յառաջիկայ օրերուն:

PRELATE VISITS THE SCHOOLS OF DAVIDIAN-MARIAMIAN FOUNDATION

At the start of each academic year the Prelate traditionally visits Prelacy schools. This year, by invitation of the Davidian-Mariamian Educational Foundation, the Prelate is also visiting those public schools in which the Foundation has established an Armenian curriculum. At the end of each school year the Prelate also attends ceremonies organized by the Foundation in honor of top graduating Armenian students of public schools.


On the afternoon of Thursday, November 8th, the Prelate, accompanied by Rev. Gomidas Torossian and Foundation's representatives, visited one such school, Balboa Elementary, where he was welcomed by administrators and Armenian instructors. Also in attendance were principal Linda Russo-Milano, Glendale School District Superintendent Dr. Michael Escalante, Greg Krikorian and Nayiri Nahabedian, District Board of Education president and member respectively.

The Prelate commended those students that opt to follow the Armenian program, the parents that encourage their children to participate in the program, and the devoted servants of Davidian-Mariamian Educational Foundation for their commitment to providing this invaluable opportunity.

The Prelate's school visits will continue in the coming days.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՅՆԷՔ ԿԱՏԱՐԵՑ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, 4 Նոյեմբերի առաւօտուն, Ամենայն Սրբոց տօնին եւ Ընսիւնյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ



հիմնադրութեան 44րդ տարեդարձին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. պատարագ մատուցուեցաւ եկեղեցւոյ մէջ: Ս. պատարագը մատուցանեց թեմիս Բարեշան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, իսկ Ս. Սեղանին սպասարկեցին Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան եւ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան: Աղօթակից էր նաեւ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Իր քարոզին մէջ Առաջնորդ Սրբազան Յայրը օրհնեց յիշատակը բոլոր այն երախտաւորներուն, որոնք 44 տարիներ առաջ տեսիլքը եւ իմաստութիւնը ունեցան հիմնելու այս եկեղեցին, նշելով, որ անոնց հաւատքն ու նուիրումը համազօր էր մեր Տիրոջ գծած ուղիէն ընթանալու:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Յօր գլխաւորութեամբ, թափօրը առաջնորդուեցաւ «Աւետիսեան» սրահ, ուր եկեղեցւոյ Տիկնանց

Միութեան կողմէ պատրաստուած էր մատաղը: Կատարուեցաւ մատաղօրհնէք:

Սրբազան Հայրը օրհնեց եւ բարձր գնահատեց Տիկնանց Միութեան եւ Հոգաբարձութեան անդամներուն մատուցած ծառայութիւնը, ինչպէս նաեւ մատաղին իրենց սիրաբարոյական օժանդակութիւն բերած բոլոր հաւատացեալները:

Աւարտին՝ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով եւ «Կիլիկիա» ու «Մեր Հայրենիք» մաղթերգներու կատարումով վերջ գտաւ հոգեպարար արարողութիւնը:

Եւ այնք, որ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, ու նախաձեռնութեամբ հոգաբարձութեան, Շաբաթ, 3 Նոյեմբերի երեկոյեան, եկեղեցւոյ կից «Աւետիսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ հիւրընկալութեամբ Տեր եւ Տիկն Լեւոն եւ Մարի Արապեան ամուլին: Հանդիսութեան ընթացքին, հոգաբարձութեան ատենապետ Տիար Լեւոն Արապեան արժանացաւ յատուկ յուշանուէրի մը, եկեղեցւոյ իր մատուցած բազմամեայ ծառայութեան համար:

DIVINE LITURGY CELEBRATED ON THE NAME DAY OF HOLY MARTYRS CHURCH

On Sunday, November 4th, All Saints' Day as well as the name day and 44th anniversary of Holy Martyrs Church of Encino was commemorated by Episcopal Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who was assisted at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Razmig Khatchadourian. H.E. Archbishop Yeprem Tabakian also participated in the services.

In his sermon the Prelate gave thanks and glory to God and blessed the founders of the church who 44 years ago had the vision and wisdom to establish this church.



At the conclusion of services the Prelate was led in a procession to "Avedissian" Hall where the blessing of *madagh* took place. The Prelate commended the parish Ladies Auxiliary, who had prepared the *madagh*, and the Board of Trustees for their service and the parishioners who had contributed financially to the preparation.

The service concluded with the Prelate's benediction and the collective singing of "Giligia" and Armenia's national anthem.

The banquet in celebration of the name day of the church took place under the auspices of the Prelate on the evening of Saturday, November 3rd, at

“Avedissian” Hall. The banquet was hosted by Mr. and Mrs. Levon and Mary Arabian and organized by the Board of Trustees. In honor of his decades long service to the church Mr. Arabian was presented with a memento during the banquet.

ԱՄԵՆԱՅՆ ՍՐՔՈՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՊԱՏԱՆԵԱՅ ԶԱՄԱՔ, ՔՐԵՏԵՆԹԱ ԶՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Չորեքշաբթի, 31 Յոկտեմբեր 2007ի երեկոյեան, Լա Քրետենթա Յովիտի Յայց. Առաքելական Եկեղեցւոյ պատանեաց խումբը, Ամենայն Սրբոց տօնին առթիւ, առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչներէն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, դաստիարակչական ծրագիր մը ներկայացուց: Զաւաքին ներկայ էին Գերպ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, շրջանի հոգեւոր մատակարար Արժ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան, հոգաբարձուներ, որոնք իրենց քաջալերական խօսքերով հանդէս եկան, նաեւ ծնողներ՝ որոնք ստանձնած էին երեկոյեան հիւրասիրութեան պարտականութիւնը:

Զայր Սուրբը պատմական եւ եկեղեցագիտական ծանօթութիւններ փոխանցեց եւ աստուածշաշնչական մէջբերումներով լուսաբանութիւններ տուաւ Զալաուիկի մասին, նշելով, որ անիկա հեթանոսական աւանդութիւններու մնացորդն է մերօրեայ կեանքին մէջ: Ան շեշտեց, որ իբրեւ քրիստոնեաներ, մենք պէտք է նախապատուութիւնը տանք Ամենայն Սրբոց տօնին, որովհետեւ, քրիստոնեական հաւատքի ու Քրիստոսի եկեղեցւոյ պաշտպանութեան եւ անկախութեան համար, հին թէ նոր, ծանօթ թէ անծանօթ բոլոր հաւատացեալ սուրբերը, հաւատքի ախոյեան անձնագոհ վկաներ եւ Քրիստոսի անունը նահատակութեան գնով դաւանող մարտիրոս հերոսներ են, որոնք արժանի են յարգանքի, նաեւ ներշնչման անսպառ աղբիւր են:

Երեկոն անցաւ ջերմ մթնոլորտի մէջ. պատանիներ, թիւով շուրջ 90, խաղերով եւ գրոյցներով իրենց մասնակցութիւնը բերին յայտագիրին:

Զաւաքոյթ խրախճանքին ներկայ եղան նաեւ Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ պատանեաց խումբի պատասխանատուներն ու անդամները:

CRESCENTA VALLEY PARISH YOUTH GROUP CELEBRATES ALL SAINTS' DAY

On the evening of Wednesday, October 31st, the Crescenta Valley parish youth group had organized an educational program led by Prelacy Christian Education Department Co-Director and Crescenta Valley youth group leader Very Rev. Fr. Barthev Gulumian. The event was held on the occasion of All Saints' Day. Joining the youth members were Very Rev. Fr. Muron Aznikian, parish pastor Rev. Ardag Demirjian, Board of Trustees members, parents, as well as youth leaders and members of St. Sarkis Church in Pasadena.

In his presentation Very Rev. Fr. Barthev explained that the origins stating that the traditions of Halloween date back to pre-Christian pagan times. He stressed that as Christians we must celebrate All Saints' Day because our saints became martyrs and heroes for the protection of our Christian faith and church and as such are worthy of our respect. Moreover, they are the champions of our faith and an undying source of inspiration to us all. Therefore, we must respect and honor the memories of our martyred saints who gave their lives for the love of Christ and became living witnesses to our faith. The evening then continued with the attendees participating in games and further discussions.